

ԲՅԻՇԿԻ, ԲՅՇԿՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԻՒԱՆԴՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

II

Մեր յետադայ ըսելիքները դիւրհասկանալի դարձնելու համար, անհրաժեշտ է պարզաբանել հիւանդութեան էութիւնը և անոր այլազան ձևերը: Ատոր համար նպատակալարմար է հիւանդութիւնները դասաւորել ժողովրդին մատչելի ձևով, որպէսզի կարելի ըլլայ դարմանման մասին մեր մէջ տարածուած թիւրիմացութիւնները հանդէս բերել:

1. Այս հիւանդութիւնները հետեանք են միջրոպային թունաւորումներու: Ախտածին միջրոպը բուսական կամ կենդանական էակ մըն է, որ կը տեղաւորուի մարմնի մէկ մասին մէջ ու անկէ՝ արեան և աւելի միջոցով թոյն կ'ուղարկէ մարմնի բոլոր մասերուն և կամ արեան հետ շրջան կ'ընէ թունաւորելով ամբողջ մարմինը: Ուստի բժիշկը պէտք է շախպտի միջրոպը սպաննել, որպէսզի թոյնի արտադրութիւնը դադրի: Այսպէս օրինակ, 606-ով կը սպաննէ տրէպօնէմը սիֆիլիզի միջրոպը — էմէտինով՝ թանչքի (տիզանթրիի) ամիպամ, քինինով՝ մալարիայի միջրոպը: Այս դեղերը մասնալատուկ սպաննիչ յատկութիւն ունին սոյն միջրոպներուն վրայ: Սակայն այսօրինակ դեղեր բժշկութեան մէջ հազուադէպ են: Իրօք, բժշկութիւնը ունի ասոնցմէ բիւր անգամ դօրեղ մանրէսպաններ, բայց անկարելի է գործածել զանոնք որովհետև ոչ միայն միջրոպը կը ըսպաննեն, այլ և ստէպ հիւանդը: Օրինակ, հիւանդ մը կը հարցնէր թէ ի՞նչու բժիշկը պէրմանկանատի (permanganate) ուժեղ լուծոյթ չի գործածեր, որ մէկ անգամով ջերմամիզութեան միջրոպները սպաննէ: Արդարև, մակերեսային բոլոր միջրոպները կըսպաննէ, սակայն կը փետտէ վարակուած գործարաններու պաշտպանողական թաղանթը, կը քանդէ հուղաշերտը և կը փճացնէ մինչև անգամ նուրբ հիւակէնները, որով կը յառաջանայ հիւանդի համար ծանր կացութիւն մը: Արդ, փոխանակ այս վտանգաւոր քայլը առնելու, բժիշկը կը ստեղծէ այնտեսակ վիճակ մը, ուր միջրոպի ուժը կը տկարանայ, աճողութիւնը կը դանդաղի և թունաւոր ազդեցութիւնը կը մեղմանայ, կը թուլնայ և դեղը ու մարմինը միանսնարար կը մարտնչին ու կը յաղթեն միջրոպին:

Մէկ խօսքով, այս դասի հիւանդութիւններու միջրոպը կամ կարելի է միանգամայն մեռցնել և կամ աստիճանաբար: Այդ է պատճառը, որ թանչքէն տառապողը 2 - 3 ներարկումէ վերջ յոյժ կը բարւոքուի, իսկ ջերմամիզութիւն ունեցողը յաճախ պէտք է ամիսներով դարմանուի:

2. Այս հիւանդութիւններն ալ ախտածին ու վարակիչ միջրոպներու արդիւնք են, որոնց դէմ բժիշկը կը պայքարի գլխաւորաբար

մարմինը ուժեղացնելով: Օրկ. բժաւոր տենդի (Թիֆլիս) միջրոպը սպաննող զեղ չունինք, կամ աւելի շուտ դեռ չէ գտնուած: Սակայն մէկ բան կայ, որ կարող է այդ միջրոպը սպաննել: Այդ՝ մարդկային մարմինն է, որ ունի հակամիջրոպային զօրքեր, որոնցմէ դիսաւորն են արեան սպիտակ գնդիկները: Այս զօրքերը մարմնին մէջ կը սպասեն յարձակումի, և կը բազմանան երբ միջրոպները մուտք դանն: Այս հակամիջրոպային տարրերու, զօրքերու անհատական զօրութիւնը և թուական մեծութիւնը կախում ունին միջրոպին ուժէն, բայց գլխաւորապէս հիւանդի առողջակամ վիճակէն, մարմնի գօրութենէն: Միջանկեալ ըսենք, որ մարմնի զօրութիւնը գերութեան, լեցունութեան կամ կարմիր ալտերուն մէջ չէ, այլ մարմնի դանդաղ գործարաններուն ներդաշնակ դործնէութեան, որմէ կախուած է անոր դիմադրական ուժը: Բժիշկը, ուրեմն, իր ուժերը կը կեդրոնացնէ այն միջոցներու վրայ, որոնք կ'աւելացնեն կամ անխախտ կը պահեն մարմնի դիմադրական ուժը, հետեւաբար և հակամիջրոպային զօրքերը: Բժիշկը այն վարպետն է, որ գիտէ թշնամիին, միջրոպին գործելու եղանակը և անոր դադանիքները, և ուշի ուշով կը գիտէ թէ թշնամին ուր պիտի հասցնէ կամ հասցուցեր է իր հարուածը, ու անոր համաձայն դարման կը դոնէ, որ մարմինը յաղթէ: Եթէ հիւանդը տկար է ու անզօր այն ատիճան, որ տրուած դեղերը մարմինը կարող չէ օգտագործել, այն ժամանակ միջրոպները կ'ուժեղցնեն իրենց թունաւորումը աւելի մեծ թափով, հիւանդին մէջ եղած ուժն ալ կը ջլատեն և այսպիսով հիւանդը կը մեռնի: Ի՞նչու մայր մը կը դանդաղէր թէ իր բժիշկը այնքան թիֆօնը աղէկցուցած է, բայց իր տղան չէր կրցած: Այդքան հիւանդներ աղէկցնող բժիշկը անտարակոյս և այս թշուառ մօր դաւակն ալ կարող էր աղէկցնել, եթէ տղան արդէն տկարացած չըլլար դանդաղան պատճառներով, ինչպէս հարեցողութիւն, սեռային չափազանց անտուժկալութիւն և այլն:

Պէտք է շեշտել մէկ բան ևս. հիւանդներ կան, որ առանց բժիշկի կ'ապաքինին, ատոր համար յաճախ կը լսեմ սա յանկերզը, «բժիշկ ալ չբերէինք, արդէն պիտի լաւանար»: Այո, թերևս: Սակայն, ընթերցող, մի մոռնար մէկ բան. հիւանդներ ալ կան, և այս կըսեմ շեշտելով, որ չպիտի մեռնէին, եթէ բժիշկի խնամքին և հսկողութեան յանձնուած լինէին: Այդպիսի հիւանդներու դիմադրական ուժը աստիճանաբար պարտուած է միջրոպներու յարձակումէն, մինչդեռ քանի մը անհրաժեշտ միջոցներ այդ դիմադրութիւնը պիտի բարձրացնէին ու միաժամանակ տկարացնէին միջրոպները: Վերջ ի վերջոյ, ո՞վ կարող է մեզ ըսել նախօրօք, ո՞ր հիւանդը պիտի դիմանայ, և ո՞րը պիտի մեռնի: Ամէն պարագային, խելացիութիւնը՝ հիւանդը բժիշկի խնամքին յանձնելն է:

Այստեղ չեմ ուղեր կանգ առնել այն միջոցներուն ու դարմաններուն վրայ, որոնք մարմինը կ'ուժեղացնեն, անոր դիմադրական

կորովը կը բարձրացնեն: Այդ հարցը ի՛նչքան ալ շահեկան է, ինձ պիտի չեղեցնէր իմ նիւթէն:

3. Այս հիւանդութիւնները արդիւնք են դանդաղ և երկարատև թորրոքումներու, որոնք փճացուցած են մարմնի գործարաններէն մէկ կամ մէկ քանիին բնականոն կազմը, հիւսկէնները փտեր ու յետոյ փոխուեր են և հետևաբար անկարող են իրենց պաշտօնը կանոնաւոր կերպով կատարել: Օրինակ, պնդերակուծիւն — ծերութեան և այլ պատճառներու հետևանքով երակներու կարծրացում—ունեցող մէկը, որ գիտական բոլոր կեդրոնները պտտեր, մէկ քանի տասնեակ ուսուցչապետներ տեսած է, կը գանգատէր որ շատ դրամ ծախսեր է, քայքայ օգուտ չէ տեսեր: Այս հարուստ պարոնը լո՛ւնչպէս կը սպասէ, որ իր բժիշկները իր կարծրացած, իր պնդացած երակներուն առածգակաւորութիւն տան: Այդ ընելու համար պէտք է մարդը սպաննել, և անոր տեղ նոր մը ստեղծել: Այդ արդէն անկարելի է և իմ երեւակայութիւնը չի զօրեր հաւատարու համար, որ երբեքից այդ կարող է կատարուիլ, կամ բժշկութիւնը այդ բանը ապագային կրնայ գլուխ բերել: Բժշկութիւնը միայն կարող է, որ պնդերակուծիւնը յառաջ չգայ, իսկ այդ կը կարօտի բազմաչարչար և երկարատև աշխատանքի: Իսկ երբ պնդերակուծիւնը արդէն կազմուեր է, բժշկին կը մնայ չթոյլատրել որ նա յառաջանայ և մահացու դառնայ: Նոյնը կարելի է ըսել, երբ կամ ունեննու, սրտի, ստամոքսի, լեարդի, ողնուղեղի և այլն քրոնիկ հիւանդութիւններու մասին:

4. Այս կարգի հիւանդութիւնները միմիայն վիրաբոյժի նշտրակը կը բժշկէ: Ասոնք թէպէտ տեղական և մասնակի հիւանդութիւններ են, այս կամ այն գործարանին մէջ են, սակայն կը սպառնան հետզհետէ կեանքին, գործելով խոշոր աւերներ և յաճախ յառաջացնելով անբուժելի բարդութիւններ: Վիրաբոյժը երբ հիւանդին գործողութեան ենթարկուիլ կը թելադրէ, կը նշանակէ, որ ուրիշ ուղի չկայ: Այսպէս օր. հիւանդ մը, որ իր երիկամունքի մէջ քարեր ունէր և թարախում, դիմեց ինձ բժշկուելու: Յանձնարարեցի նոյն հետայն հանել իր այդ երիկամունքը: Օրերով բացատրեցի վտանգը իր կեանքին դէմ. ի՛գուր. «Sofթօր, ունեցածս՝ սա մէջքիս ցաւն է, ամէն քան տեղն է— լա կ'ուտեմ, լա կը խմեմ: Դեղ մը տուր, որ սա ցաւը չգայ»: Ինձ հասկնալ չուզեց: Ութ ամիս վերջ բերին հիւանդանոց մահամեծ վիճակի մէջ: Թարախը կերեր էր երիկամունքը, մտեր էր մկանունքներու մէջ ու ամբողջ մարմինը թունաւորուած էր թարախով: Այս անգամ հասկցեր էր, սակայն շատ ուշ:

Հիւանդները շատ սխալ գաղափար մըն են գոյացուցեր, որ բժիշկը մասնաւոր հաճոյք կը դրայ դանակ գործածեմէն: Ընդհակառակը, վիրաբոյժը իր նշտրակը կը գործածէ, որովհետև ուրիշ ճանապարհ չկայ հիւանդին ապաքինման համար: Դեռ քանի մը օր առաջ ծանօթ մը խորհուրդ կը հարցնէր թէ կէնը կուրաղետապ ունի, բժիշկը

գործողութիւն յանձնարարեր է. ի՞նչ ընէ : Այլ ուրիշ ի՞նչ կայ ընելու : Եթէ հիւանդութիւնը կուրաղեատալ է, պէտք է կուրաղին հանել, այլապէս բորբոքումը կարող է տարածուել փորի մէջ և մեռնիլ : Վիրաբոյժը կը կտրէ ոչ թէ որովհետև անպէտք է, այլ վտանգաւոր : Փտախտաւոր ոտքը կը կտրէ, որպէսզի փտութիւնն ու նեխումը չթունաւորեն մարմինը, բորբոքած աչքը կը հանէ, երբ յստակ կ'ըլլայ որ միւս աչքն ալ պիտի վտանգուի և այլն :

5. Եւ վերջապէս կան հիւանդութիւններ, որոնց համար բժշկութիւնը առայժմ դարման չունի : Օր. քաղցկեղը—կանսէրը—երբ յառաջացած է, տարածուած է մարմնի զանազան խուլերի մէջ, յատկապէս կուրծքի և որովայնի, այդ պարագային գործողութիւնն անդամ օգուտ չունի : Այդ հիւանդը սահմանուած է աստիճանաբար հիւծելու և մահանալու : Ի հարկէ, երբ քաղցկեղը կը ներկայանայ բժշկին իր սկզբնական շրջանին մէջ, այն ժամանակ յոյսի դռները կը բացուին : Վիրաբուժութիւնը՝ շատ շրջահայեաց կերպով արմատախիլ կ'ընէ հիւանդութիւնը և կ'ազատէ հիւանդը մարդկութեան այդ մեծագոյն պատուհասէն :

Այս բոլորի հետ կը փափաքէի շեշտել այն, որ հիւանդութեան յաղթողը հիւանդի մարմինն է, անոր դիմադրական կարողութիւնն է : Հասարակ սկզբուկ մը կարող է մարդը մեռցնել հակառակ լաւագոյն բժիշկներու և վիրաբոյժներու ջանքերուն :

ԲԺ. ԵՐ. ԽԱԹԱՆԱՍԵԱՆ

1. ԱՆԻ ԹԷ ԽՆԴԱԼ

- Թրքախօս հայ կին մը, մօտ 35 տարեկան : Ներս կը մտնէ ու կը նստի բաղկաթոռին վրայ :
- Ի՞նչ ունիք, Տիկին :
- ?
- Կը հաճի՞ք ըսել թէ որ տեղերնիդ կը ցաւի :
- Քննեցէք և կը հասկնաք :
- Խնդրեմ Տիկին, կ'ըսեմ քիչ մը անհամբեր, ի՞նչ բանի համար կ'ուզէք որ ձեզ քննեմ :
- Վայրկեան մը խորհելէ ետք .
- Տէ հայտէ ըսեմ, թէ և որոշած էի բան մը չըսել, որպէս զի քննելով դուք իսկ հասկնայիք ցաւս . . .